

**Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության  
պաշտպանության պետական հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի  
3-ի թիվ 86-Ա որոշման մասին**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) վարչական վարույթ էր սկսել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի նկատմամբ համարելով, որ բանկերի կողմից ֆինանսական ծառայությունների մատուցման ընթացքում որպես նախապայման հաճախորդներին առաջարկվում է օգտվել կոնկրետ կազմակերպությունների կողմից մատուցվող օժանդակ (ապահովագրություն, գնահատում և այլն) ծառայություններից, ինչը սահմանափակում է հաճախորդների ընտրության իրավունքը և հնարավորություն է ստեղծում Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի (հակամրցակցային համաձայնությունները, դրանց արգելումը) պահանջների խախտման համար:

Վարչական վարույթի արդյունքներով, Հանձնաժողովը 2008 թվականի սեպտեմբերի 3-ին կայացրել է թիվ 86-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում), համաձայն որի ՀՀ տարածքում գործող թվով ինը բանկեր նախագուշացվել են և վերջիններիս հանձնարարվել է շտկել ու հետագայում բացառել համաձայնեցված գործողությունների (վարքագծի) միջոցով հակամրցակցային համաձայնությունների կնքումը (կայացումը), որն արտահայտվում է լրացուցիչ պայմանների սահմանմամբ ապահովագրական ընկերությունների շուկա մուտք գործելուն խոչընդոտելով (շուկա մուտք գործելը սահմանափակելով) կամ շուկայից նրանց դուրս մղելով: Նշվածի հետևանքով, այդ ընկերությունները մուտք չեն գործել շուկա կամ դուրս են մղվել շուկայից, ինչպես նաև առաջարկվել կամ կիրառվել են այնպիսի պայմաններ, որոնք ապահովագրական և գնահատող ընկերությունների համար առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովի որոշմամբ նշված 9 բանկերին հանձնարարվել է՝

1) վարկավորման ընթացքում ապահովագրական և գնահատող տնտեսվարող սուբյեկտների հետ համագործակցել համահավասար սկզբունքներով, միանման և հրապարակային պայմաններով:

2) Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն որոշման կատարման կապակցությամբ իրենց կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

***Բանկերի և բանկերի միության դիրքորոշումը***

Վերոգրյալի առնչությամբ հարկ է նշել, որ բանկային ռիսկերի կառավարումը կարևորագույն խնդիր է, քանի որ բանկերը գործ ունեն ոչ միայն իրենց բաժնետերերի, այլև տասնյակ հազարավոր ավադնատուների գումարների հետ, և այս առումով, բանկային ռիսկերի պատշաճ կառավարման համար բանկերի ղեկավարները կրում են անմիջական պատասխանատվություն ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, այլ նաև պատասխանատվություն բանկի բաժնետերերի առջև: Բանկային ռիսկերի արդյունավետ կառավարումը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի ֆինանսական համակարգի կայունության ապահովման անկյունաքարերից մեկը:

Բանկային ռիսկերի արդյունավետ կառավարման այս կարևորագույն անհրաժեշտությունից ելնելով՝ յուրաքանչյուր առևտրային բանկ ունի իր կողմից սահմանված և իր համար ընդունելի սկզբունքներ և ինքնուրույն է ընտրում իր ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդներն ու եղանակները: Դրանց հիման վրա, մասնավորապես, որոշվում են մասնագիտացված ծառայություններ մատուցող կազմակերպությունները, որոնց հետ աշխատում է տվյալ բանկը: Այդ սկզբունքներն ընդհանուր առմամբ շատ պարզ և հասկանալի բնույթ ունեն՝ հուսալիություն

(ապահովագրական ընկերությունների համար՝ կապիտալի պահանջներ, վերաապահովագրող ընկերությունների հեղինակության հետ առնչվող պահանջներ, աուդիտորական վերջին ստուգումների արդյունքների վերաբերյալ պահանջներ և այլն), մատչելիություն, գործունեության արդյունքների արժանահավատության ապահովում և այլն: Մասնագիտացված ծառայություններ մատուցող ընկերությունները բանկերի կողմից ընտրվում են հիմնականում մրցութային եղանակով:

Բացի վերոգրյալ դրույթից անհրաժեշտ է շեշտել, որ բանկերի և օժանդակ ծառայություններ մատուցող կամակերպությունների միջև համագործակցությունը չի կարող հակամրցակցային համաձայնություն հանդիսանալ, քանի որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն հակամրցակցային համաձայնությունները կնքվում (կայացվում) են՝

ա) միևնույն ապրանքային շուկայում գործող (մրցակից հանդիսացող) տնտեսվարող սուբյեկտների միջև (հորիզոնական համաձայնություն),

բ) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում գործող (մրցակից չհանդիսացող՝ տվյալ ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացնող ու ձեռքբերող) տնտեսվարող սուբյեկտների միջև (ուղղահայաց համաձայնություն):

Տվյալ դեպքում օժանդակ ծառայություն մատուցողների ծառայություններից օգտվում են (նրանց հաճախորդ կամ պատվիրատու են հանդիսանում) ոչ թե բանկերը այլ վարկառուները այսինքն բանկերն ու օժանդակ ծառայություններ մատուցողները միմյանց հանդեպ իրացնող և ձեռքբերող չեն հանդիսանում:

Բացարձակ անհեթեթություն է թվում այն ենթադրությունը, որ եթե օրինակ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն իրեն ապահովագրական ծառայություններ մատուցող ընկերություն է ընտրել «ՍԻԼ ԳՐՈՒՊ»-ի անդամ «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ընկերությանը, իսկ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ն «Կասկադ Կապիտալ Հոլդինգ» ընկերության մեջ մտնող «Կասկադ Ինշուրանս» ապահովագրական ընկերությանը, ապա այդ բանկերը նպատակ են ունեցել գործել համաձայնեցված՝ կնքելով հակամրցակցային հորիզոնական համաձայնություն: Այս բանկերի կողմից նշված ապահովագրական ընկերությունների ընտրությունը պայմանավորված է եղել միայն ու միայն վերջիններիս վստահելու փաստով և իր մեջ չի կրում որևէ հակամենաշնորհային տարր:

Ըստ էության, Որոշումը կայացնելիս Հանձնաժողովը գործի փաստական հանգամանքներն ուսումնասիրել է մակերեսորեն, ոչ օբյեկտիվ և ոչ լիարժեք, որի արդյունքում կայացրել է ՀՀ օրենսդրությանը հակասող որոշում, որը, մեր համոզմամբ, ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Որոշումը չի պարունակում անհրաժեշտ հիմնավորումներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ նման Որոշման ընդունման համար, բանկերին օժանդակ (ապահովագրություն, զնահատում և այլն) ծառայություններ մատուցող ընկերությունների համար ոչ բարենպաստ պայմանների ստեղծման փաստական հանգամանքներն ապացուցված չեն,
2. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի 4-րդ մասի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 19 մարտի 2008 թվականի «Ապրանքային շուկայի սահմանների, սուբյեկտների կազմի և ծավալի որոշման կարգի մասին» թիվ 15-Ն որոշման իմաստով չի որոշել ապրանքային շուկայի սահմանները, սուբյեկտների կազմը և ծավալը, որի արդյունքում ուսումնասիրել է «անհայտ» շուկա և դրա առնչությամբ որոշում կայացրել,
3. Վարչական վարույթի ընթացքում խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված վարչական վարույթի ժամկետներին վերաբերող պահանջները:

Փորձենք բացահայտել վերոգրյալ փաստարկներն առանձին առանձին, և ապացուցել, որ Հանձնաժողովը ՀՀ օրենսդրությանը հակասող որոշում է կայացրել, որն ակներևորեն անհիմն է:

1. Որոշումը չի պարունակում անհրաժեշտ հիմնավորումներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ Որոշման ընդունման համար, բանկերին օժանդակ (ապահովագրություն, գնահատում և այլն) ծառայություններ մատուցող ընկերությունների համար ոչ բարենպաստ պայմանների ստեղծման փաստական հանգամանքներն ապացուցված չեն:

Հանձնաժողովը Որոշումով բանկերին մեղադրել է հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) մեջ:

Համաձայն գործող օրենսդրության պահանջների՝ հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) մեջ բանկերին մեղադրելիս Հանձնաժողովը պետք է նախևառաջ ապացուցեր նման փաստական հանգամանքի առկայությունը և երկրորդը՝ Որոշման մեջ պետք է նշեր որոշման ընդունման համար հիմք հանդիսացած համապատասխան փաստական հիմքերը:

Վարչական վարույթի քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրել է, որ ՀՀ-ում գործող բանկերի մոտ 40 տոկոսի հաճախորդներն անշարժ գույքի ապահովագրությունն իրականացնում են բանկերի կողմից նախընտրած մեկական ապահովագրական ընկերությունների միջոցով: Բանկերի կողմից վարկավորման համար անհրաժեշտ ապահովագրության, ինչպես նաև գույքի գնահատման ընթացքում որոշակի ապահովագրական և գնահատման ընկերությունների նախապատվություն տալը վկայում է բանկերի անուղղակի համաձայնեցված գործողությունների (վարքագծի) միջոցով հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների կնքման մասին, որն արտահայտվել է լրացուցիչ պայմանների սահմանմամբ ապահովագրական ընկերությունների շուկա մուտք գործելուն խոչընդոտելով կամ շուկայից նրանց դուրս մղելով, որի հետևանքով այդ ընկերությունները մուտք չեն գործել շուկա կամ դուրս են մղվել շուկայից, ինչպես նաև այնպիսի պայմանների առաջարկմամբ կամ կիրառմամբ, որոնք ապահովագրական և գնահատող ընկերությունների համար առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (Հակամրցակցային համաձայնությունները, դրանց արգելումը) 1-ին մասը տալիս է «հակամրցակցային համաձայնություն» եզրույթի հասկացությունը, որի համաձայն՝ այդ օրենքի իմաստով հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների կողմից ընդունված որոշումները, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, բացառությամբ նշված հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

«Հակամրցակցային համաձայնություն» եզրույթի վերոհիշյալ բնորոշումից բխում է, որ հակամրցակցային համաձայնության կողմերի միջև անհրաժեշտ են գործողությունների կատարում (գործարքի կամ համաձայնության կնքում կամ որոշման կայացում, որոնք պետք է հանգեցնեն կամ կարող են հանգեցնեն որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը), ուստի՝ բանկերի գործողությունները «հակամրցակցային համաձայնություններ» որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդպիսի համաձայնությունները բավարարեն ստորև նշված էական պայմաններին.

ա) տնտեսվարող սուբյեկտների միջև պետք է կնքված լինեն գործարքներ կամ համաձայնություններ կամ կատարված լինեն ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողություններ կամ դրսևորած լինեն վարքագիծ, իսկ տնտեսվարող սուբյեկտների միավորումների կողմից կայացված լինեն որոշումներ, որոնք՝

- ուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության կամ սահմանափակմանը կամ կանխմանը կամ արգելմանը.

- անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության կամ սահմանափակմանը կամ կանխմանը կամ արգելմանը.

Սակայն վերը նշված էական պայմանների առկայությունը դեռևս բավարար հիմք չէ, որպեսզի համաձայնությունները դիտվեն որպես հակամրցակցային: Անհրաժեշտ է, որպեսզի տնտեսվարող սուբյեկտների համաձայնություններն ուղղված չլինեն նրանց մրցունակության ապահովմանը կամ բարձրացմանը, և համաձայնության մասնակիցների ընդհանուր բաժինը տվյալ ապրանքային շուկայում գերազանցի 20 տոկոսը:

Հանձնաժողովը վարչական վարույթի ընթացքում քննության առարկա չի դաժրել և չի հիմնավորել վերոհիշյալ իրավադրույթներից յուրաքանչյուրը, որի արդյունքներում հանգել է սխալ հետևությունների: Տվյալ դեպքում հանձնաժողովի կողմից ապացուցման առարկա պետք է հանդիսանար ապահովագրական շուկայում ապահովագրական ընկերությունների մրցակցության սահմանափակմանը կամ կանխմանը կամ արգելմանն ուղղված բանկերի գործողությունները:

Գործի փաստական և իրավական հանգամանքներից հստակորեն բխում է, որ բանկերն անուղղակի համաձայնեցված գործողությունների (վարքագծի) միջոցով չեն կնքել (կայացրել) հորիզոնական հակամրցակցային համաձայնություն, որն իր արտահայտությունն իբր թե գտել է լրացուցիչ պայմանների սահմանմամբ ապահովագրական ընկերությունների շուկա մուտք գործելու խոչընդոտմանը կամ շուկայից նրանց դուրս մղմանը, որոնց արդյունքում ապահովագրական ընկերությունները մուտք չեն գործել շուկա կամ շուկայից դուրս են մղվել, ինչպես նաև այդ ընկերություններին այնպիսի պայմաններ չի առաջարկվել կամ կիրառվել, որոնք ապահովագրական այլ ընկերությունների համար առաջացրել կամ կարող էին առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ:

Որոշման մեջ Հանձնաժողովը որպես բանկերի միջև հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների կնքման ապացույցներ նշել է վարչական վարույթի ընթացքում պարզած հետևյալ փաստական հանգամանքները.

ա) բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կնքվող հիփոթեքային և տրանսպորտային միջոցների վարկավորման տիպային և այլ պայմանագրերում, որպես վարկի տրամադրման պայման, նշվել են ապահովագրությունը և (կամ) գնահատումն իրենց համար ընդունելի ապահովագրական կամ գնահատող ընկերությունների կողմից իրականացնելը, իսկ որպես ընտրության չափանիշ՝ հիմնականում գործունեության ժամկետը (2-3 տարի), մատուցված ծառայությունների համապատասխան ծավալը, բանկում ժամկետային ավանդի առկայությունը (դրա նվազագույն գումարի չափը, որը հանդիսանում է հնարավոր պարտավորությունների ապահովման միջոց), սահմանված պարբերականությամբ ֆինանսական հաշվետվությունների տրամադրման, ապահովագրության, աուդիտորական վերջին ստուգումների, կապիտալի, ինչպես նաև վերաապահովագրող ընկերությունների հեղինակությանն առչվող պահանջներ և այլն: Որոշ դեպքերում պայմանագրերում նշված է բանկի՝ որպես շահառու հանդիսանալու պայման:

բ) բանկերից ստացված տեղեկատվության հիման վրա պարզված վիճակագրությունը, համաձայն որի բանկերի կողմից հիփոթեքային վարկերի տրամադրման ընթացքում թվով 22 բանկերից 9-ի հաճախորդներն օգտվում են մեկական ապահովագրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայություններից, թվով 9 բանկերից 4-ի հաճախորդներն օգտվում են միևնույն ապահովագրական ընկերության ծառայությունից, իսկ թվով 22 բանկերից 3-ի հաճախորդներն օգտվում են մեկական գնահատող ընկերության կողմից մատուցվող ծառայություններից,

գ) Հայաստանի բանկերի միության 2008 թվականի մայիսի 19-ի թիվ ՀԲՄ-2008-033 գրությունը, որով Հայաստանի բանկերի միությունը հայտնում է, որ ելնելով բանկային արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, յուրաքանչյուր առևտրային բանկ

ունի իր կողմից սահմանված և իր համար ընդունելի սկզբունքներ և ինքնուրույն է ընտրում իր ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդներն ու եղանակները,

դ) Հանձնաժողով ներկայացված փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի հիփոթեքային և տրանսպորտային միջոցների վարկավորման ընթացքում որոշակի ապահովագրական ընկերությունների նախապատվություն տալու հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, մի շարք բանկերի միջև հնարավոր համաձայնության հատկանիշների առկայության մասին, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել բանկերի հետ չհամագործակցող ապահովագրական ընկերությունների շուկա մուտք գործելու խոչընդոտելուն:

Նշված փաստական հանգամանքներից և ոչ մեկը՝ ո՛չ առանձին-առանձին, և ո՛չ էլ միասին չեն հիմնավորում բանկերի միջև հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների առկայության փաստը:

Այն հանգամանքը, որ բանկերի կողմից կնքվող հիփոթեքային և տրանսպորտային միջոցների վարկավորման տիպային և այլ պայմանագրերում, որպես վարկի տրամադրման պայման նշվել են ապահովագրությունը և (կամ) գնահատումն իրենց համար ընդունելի ապահովագրական կամ գնահատող ընկերությունների կողմից իրականացնելը, կամ այն հանգամանքը, որ բանկերն օգտվում են մեկ կամ մի քանի ապահովագրական կամ գնահատող ընկերությունների ծառայություններից, ոչ մի կերպ չի վկայում բանկերի միջև հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների առկայության մասին: Առավել ևս, բանկերը համագործակցել են ոչ թե միևնույն, այլ տարբեր ապահովագրական ընկերությունների հետ: Հայաստանի բանկերի միության հայտարարությունն այն մասին, որ յուրաքանչյուր առևտրային բանկ ունի իր կողմից սահմանված և իր համար ընդունելի սկզբունքներ և ինքնուրույն է ընտրում իր ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդներն ու եղանակները, նույնպես որևէ կերպ չի ապացուցում հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների առկայության փաստը:

Ինչ վերաբերում է փորձագիտական եզրակացությանը, ապա դրանում բանկերի միջև հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների հնարավոր առկայության մասին կարծիքը նույնպես հիմնվում է Հանձնաժողովի ներկայացրած փաստարկների վրա և, կարծում ենք, չի հանդիսանում հիմնավոր:

Այս դեպքում նույնիսկ անհասկանալի է, թե բանկերը ինչպիսի համաձայնություն կարող էին միմյանց միջև կայացնել, որն է այդ համաձայնության առարկան և նպատակը: Կարծում ենք, նման համաձայնությունները կարող են կնքվել՝ սահմանելով ապահովագրական և գնահատող ընկերություններ, որոնց հետ բանկերը բացառապես կամ առավելապես պետք է համագործակցեն, կամ սահմանեն մեկ կամ մի քանի չափանիշներ, որոնցով պետք է առաջնորդվեն բանկերը՝ ապահովագրական կամ գնահատող ընկերություններ ընտրելիս: Սակայն, ինչպես վկայում են Հանձնաժողովի վերլուծությունները, բանկերը համագործակցում են տարբեր ապահովագրական և գնահատող ընկերությունների հետ և սահմանում են այդ ընկերությունների ընտրության տարբեր չափանիշներ (գործունեության ժամկետ, մատուցված ծառայությունների ծավալ, բանկում ժամկետային ավանդի առկայությունը և այլն):

Հետևաբար գտնում ենք, որ Որոշման մեջ տեղ գտած փաստարկներն անհիմն են:

2. Հանձնաժողովը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի 4-րդ մասի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 19 մարտի 2008 թվականի «Ապրանքային շուկայի սահմանների, սուբյեկտների կազմի և ծավալի որոշման կարգի մասին» թիվ 15-Ն որոշման իմաստով չի որոշել ապրանքային շուկայի սահմանները, սուբյեկտների կազմը և ծավալը, որի արդյունքում ուսումնասիրել է «անհայտ» շուկա և դրա առնչությամբ որոշում կայացրել:

Համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի հակամրցակցային համաձայնություններ են համարվում

տնտեսվարող սուբյեկտների այն համաձայնությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, իսկ Որոշման մեջ նշված չէ, թե որ ապրանքային շուկայում է տեղի ունեցել խախտումը: Հարկ է նշել, որ ապրանքային շուկաների աշխարհագրական և ապրանքատեսակային սահմանների որոշումը ևս համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի 4-րդ մասի կատարվում է Հանձնաժողովի որոշմամբ: Նման որոշում վարչական վարույթի ընթացքում չի կայացվել և նման որոշման վրա չկա հղում նաև Որոշման մեջ: Հետևաբար Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել օրենսդրության խախտում, մասնավորապես՝ ամբողջ վարույթի ընթացքում ուսումնասիրվել է «անհայտ» ապրանքային շուկա և որոշում է կայացվել այդ «անհայտ» ապրանքային շուկայում կատարված խախտման վերաբերյալ: Օրինակ, անհասկանալի է «հիփոթեքային և տրանսպորտային միջոցների վարկավորում» ասելով Հանձնաժողովն ի՞նչ նկատի ունի՝ միայն բնակարանի և ավտոմեքենայի ձեռքբերումը, թե նաև դրանց վերանորոգման վարկը, թե ցանկացած անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական վարկերի տրամադրումը: Չէ՞ որ բոլոր այդ դեպքերում պահանջվում է գրավադրում և ապահովագրում: Ընդ որում հատկանշական է, որ նույնը կիրառվում է նաև բիզնես վարկերի տրամադրման դեպքում, որը ոչ մի ընդհանուր եզր չունի «հիփոթեքային և տրանսպորտային միջոցների վարկավորում» անհասկանալի տերմինաբանության հետ: Այսինքն Հանձնաժողովի կողմից կատարվել են կամայական մեկնաբանություններ, և տերմիններն օգտագործվել են մոտավոր իմաստներով: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ապրանքային շուկաների սահմանների որոշման կարգը սահմանված է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 19 մարտի 2008 թվականի «Ապրանքային շուկայի սահմանների, սուբյեկտների կազմի և ծավալի որոշման կարգի մասին» թիվ 15-Ն որոշմամբ:

Նշենք նաև, որ շուկաների աշխարհագրական և ապրանքատեսակային սահմանները, սուբյեկտների կազմը և ծավալը չորոշելը Հանձնաժողովին հնարավորություն չի տվել պարզել ենթադրյալ հորիզոնական հակամրցակցային համաձայնություն կայացրած բանկերի ընդհանուր մասնաբաժինը տվյալ ապրանքային շուկայում (ներում) որքան է կազմում՝ ըստ որի պետք է ուսումնասիրվեր, թե «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետը այդ ենթադրյալ «հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների» դեպքի համար կիրառելի է, թե ոչ: Մասնավորապես նշված կետը սահմանում է.

«Հակամրցակցային չեն համարվում տնտեսվարող սուբյեկտների այն համաձայնությունները, որոնք ուղղված են նրանց մրցունակության ապահովմանը կամ բարձրացմանը, եթե այդ համաձայնության մասնակիցների ընդհանուր բաժինը տվյալ ապրանքային շուկայում չի գերազանցում 20 տոկոսը»:

3. Վարչական վարույթի ընթացքում խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված վարչական վարույթի ժամկետներին վերաբերող պահանջները: Մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են.

1. Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

2. Վարչական վարույթի ժամկետը սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:

Նույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանվում է վարչական վարույթի երկարաձգման հիմքերը և կարգը:

Վարչական վարույթը հարուցվել է 31 մարտի 2008 թվականին և ավարտվել 2008 թվականի սեպտեմբերի 3-ին՝ Որոշումն ընդունելով: Հանձնաժողովը 26 հունիսի 2008 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2008

թվականի մարտի 28-ի գրության հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 67-Ա որոշումը:

Այսինքն վարույթի հարուցման պահից միջև վարույթը երկարաձգելու մասին որոշումն ընդունելու պահը անցել է մոտ երեք ամիս, ինչը խախտում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վարչական վարույթի առավելագույն՝ երեսունօրյա ժամկետի պահանջը:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստարկներն ու հիմնավորումները ՀՀ տարածքում գործող թվով ինը բանկերը, որոնք նախագուշացվել են և վերջիններիս հանձնարարվել է շտկել և հետագայում բացառել համաձայնեցված գործողությունների (վարքագծի) միջոցով հակամրցակցային համաձայնությունների կնքումը (կայացումը) գտնում են, որ Որոշումը հանդիսանում է ոչ իրավաչափ, ընդունվել է օրենքի խախտմամբ և հայցադիմումով դիմել են ՀՀ վարչական դատարան, խնդրելով դատարանից ամբողջությամբ անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի արդյունքների մասին» 03.09.2008թ. թիվ 86-Ա որոշումը: